ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024 թ.

(ստորագրություն)

ՍԿՍՆԱԿ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ՄԵՆԹՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Մենթորությունը հաստատվում է՝

- նոր ընդունված դասախոսների համար, ովքեր չեն ծավալել մանկավարժական գործունեություն,
- այն դասախոսների համար, ովքեր անցել են այլ աշխատանքի, և եթե նրանց կողմից պարտականությունների իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքների ընդլայնում և խորացնում նոր՝ գործնական, կիրառական հմտություններով:

1. Մենթոր դասախոսի թեկնածությունն առաջադրում է Քոլեջի մասնագիտական ամբիոնը:
2. Ամբիոնը որպես մենթոր դասախոս ընտրվում է առավել մասնագիտացած և բարձր որակավորում ունեցող փորձառու դասախոսների, որոնք ունեն հաղորդակցման, մանկավարժական, մեթոդական ունակություններ:
3. Խնամակալությունը հաստատվում է երիտասարդ դասախոսների նկատմամբ մեկ տարվա ընթացքում՝ սկսած նրա աշխատանքի անցնելու պահից:
4. Մենթորությունը նշանակվում է խնամակալի և սկսնակ դասախոսի փոխադարձ համաձայնության դեպքում:
5. Ամբիոնի մեկ մենթորին կցվում է երեքից ոչ ավելի երիտասարդ մասնագետ՝ կախված մենթորության կազմակերպման տեսակից և ամբիոնում սկսնակ դասախոսների թվից:
6. Մենթորության իրականացման նպատակով յուրաքանչյուր ուս. տարում կազմվում է աշխատանքային պլան՝ ըստ որի խնամակալ դասախոսը պետք է աշխատի իրեն կցված սկսնակ դասախոս(ների) հետ:
7. Սկսնակ դասախոսների հետ աշխատանքի արդյունքները մենթորը ներկայացնում է ամբիոնի նիստի քննարկմանը՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին: Արդյունքներն ամփոփվում են ամբիոնի մեթոդական խորհրդի կողմից: